ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ-ի նոյեմբերի 15-ի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի վարիչների հաշվետվությունը /զեկ. ամբիոնի վարիչներ/:
2. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը /զեկ.՝ Վ. Պետրոսյան/:
3. Ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. Ֆակուլտետի դասախոսների գործուղումների կարգի հաստատման հարցը:
5. Դոցենտի կոչման համար ընտրության անցկացում:
6. Ընթացիկ հարցեր. ա/ հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորման հարցը/.

Խորհուրդը որոշեց.

1. Ի գիտություն ընդունել ամբիոնի վարիչների հաշվետվությունը:

2. Հանձնարարել ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նախագահին եռամսյա ժամկետում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:
3. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից դասախոսների գործուղումները ձևակերպել միայն ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորության դեպքում:
4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման - Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Նանա Առուստամյան՝ «Եվրասիականության հայեցակարգի ակունքներն ու զարգացման միտումները», ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ:
բ/ Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ. Աշոտ Ենգոյանին:
5. Ատեստավորել հեռակա ուսուցման հետևյալ ասպիրանտներին. ա/ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնից՝ 1. Մարիա Բարաղամյան, 2. Հայկուհի Մկրտչյան:
բ/ Հանրային կառավարման ամբիոնից՝ 1. Վահե Նիկոյան, 2. Տաթևիկ Սարգսյան:
6. Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ Տիգրան Բալայանի անունը:
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:
գ/ Հաստատել Փակ գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 17-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Բալայան Տիգրան – 16 կողմ,

1 դեմ, անվավեր քվեաթերթիկ չկա:

Խորհրդի նախագահ, պրոֆ. **Գ. Պետրոսյան**
Խորհրդի քարտուղար, դոց. **Խ. Գալստյան**